



ՄԵԾ ՈՒՆՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Կիրակի, 3 հոկտեմբերի 1965 թ.:

Վեհափառ Հայրապետի գահակալության 10-րդ տարեդարձի պաշտոնական հանդիսությունները թեև հետաձգվել են մեկ ամիս ժամանակով, այնուամենայնիվ սրտագին ուրախությամբ և գոհունակությամբ պետք է արձանագրել, որ հոկտեմբերի 3-ին, կիրակի օրը, որպես նախատոն, սկսվեցին տասնամյակի հոբելյանական հանդիսությունները, բոլորովին ինքնարուխ և համաժողովրդական բնույթով:

Հայրենի ոսկե աշունը իջել է Արարատյան դաշտի վրա:

Պայծառ, ջերմ, արևոտ օր, Հայաստանի ջինջ և բուրումնավետ աշնան օրերից մեկը:

Մայրաքաղաքից, շրջաններից, մոտ ու հեռու վայրերից հոսում է ուխտավորների շարանը դեպի Մայր Աթոռ:

Մայր Տաճարը, մայրավանքի շրջափակը լիքն են հավատացյալների: Սփյուռքի շատ վայրերից՝ ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Լիբանանից, Սիրիայից, Պարսկաստանից և Իտալիայից եկած ավելի քան 250 ուխտավորներն Մայր Տաճարի երկու դասերում գրավել են իրենց տեղերը և աղոթում են երկյուղածորեն, ուխտավորի հատուկ հուզումով և խորին ապրումով:

Մայր Տաճարի զանգերը ղողանջում են ուրախ և տոնական:

Ժամը 12-ին, Նորին Ս. Օծությունը եկեղեցական թափորով մուտք է գործում Մայր

Տաճար: Մայրավանքի բակում հավաքված բազմությունը խանդավառ արտահայտություններով կանգնել է երկշարք Վեհաքահից Մայր Տաճար տանող շքերթի ճանապարհի վրա, տեսնելու Հայոց Հայրապետին, ստանալու Նրա օրհնությունը:

Մայր Տաճարում հանդիսավոր սուրբ պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Կիզիրյանը՝ ԱՄՆ-ի հայոց արևմտյան թեմի առաջնորդական փոխանորդը:

Հնչում են հայոց սուրբ պատարագի մեղեդիները, Մայր Տաճարի երգեցիկ խմբի անթերի կատարումով:

«Հայր մեր»-ից առաջ Ավագ Սեդան է բարձրանում Հայոց Հայրապետը:

«Ի վերայ Աջոյն և էջմիածնի ամենայն ազգն Հայոց կապեալ կան» բնաբանով ոգեշունչ և հայրենասիրական քարոզ է ասում Վեհափառ Հայրապետը, բոլոր ուխտավորների և հավատացյալների սրտերը լցնելով հավերժական Ս. էջմիածնի լույսով, խորհրդով և փառքով ու վերածնված հայրենի երկրի պայծառ տեսիլքով: Հայոց Հայրապետի պատգամն է դա, իր գահակալության տարեդարձի երջանիկ առիթով:

Ուրախ է Հայոց Հայրապետը, որ այսօր պայծառ է բովանդակ հայության Սրբություն Սրբոց Մայր Աթոռ Ս. էջմիածինը, որն իր մայրական թևերի տակ խնամում է ողջ հայությունը, ինչպես «հաւ զձագս իւր ընդ

թեօքն իւրովը», երեկ, այսօր և հավիտյան: Ուրախ է Հայոց Հայրապետը, որ ապրիլյան եղեռնից հիսուն տարի հետո, կենդանի է հայ ժողովուրդը, իր հայրենի հողի վրա վերածնված, և Սփյուռքի բոլոր հորիզոնների տակ, համախմբված իր Մայր Եկեղեցու հովանու տակ, կանգուն իր հավատով, իր հայրենասիրությամբ:

Հայոց Հայրապետի պատգամ-բարոգր լսվում է հափշտակությամբ, արցունքով:

«Երանի ձեզ, որ Ս. էջմիածինն ունիք»:

Քարոզի մեջ հայտնված այս միտքը ոչ միայն սրտագին վկայությունն է օտարների մեր մասին, այլ նաև ապրումը յուրաքանչյուր հայի, Առաքել Դավրիժեցու օրերից մինչև այսօր, վաղը և գալիք օրերին:

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվում է հոգեհանգիստ խարբերդցի ուխտավորների խնդրանքով, եղեռնին զոհ գնացած ավելի քան երկու հարյուր հազար խարբերդցի նահատակների հիշատակին:

Ժամը 2-ին, եկեղեցական արարողության ավարտին, Հայոց Հայրապետը հանդիսավոր թափոռով առաջնորդվում է Վեհարանի գահասրահը:

Հանուն ամերիկահայ երիտասարդաց միության, Վեհափառ Հայրապետի տոնը շնորհավորում է հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Կիզիրյանը սրտագին և ջերմ բարեմաղթություններով:

Այս երջանիկ առթիվ, նորին Ս. Օծուխյան տրվում են նվերներ:

Հանդիսության վերջում օրհնության և շնորհակալության խոսք է ասում Վեհափառ Հայրապետը, կոչ ուղղելով բոլոր ուխտավորներին՝ վառ պահել օտար հորիզոնների տակ, մեր պապերի հավատի հուրը, բարեպաշտ ոգին, հայրենասիրական ավանդությունները: Նորին Ս. Օծուխյան խոսքը հաճախ ընդհատվում է ծափահարություններով:

Հայրապետական օրհնության խոսքից հետո սկսվում է աջահամբույրը: Բոլոր ներկաները, համբույրի մեջ դրած իրենց պաշտամունքն ու սերը, ներկայացնում են Հայոց Հայրապետին, որպես որդիական հարգանաց տուրք և երախտագիտություն:

Այնուհետև, Վեհարանի հանդիսասարահում, ուխտավորների և հյուրերի պատվին, տրվում է համերգ Երևանի ֆիլհարմոնիայի լարային քառյակի կատարմամբ, մասնակցությամբ շնորհալի արվեստագետներ Լևոն Մամիկոնյանի (առաջին ջութակ), Մարտին Երեցյանի (երկրորդ ջութակ), Ռուբեն Ալթունյանի (ալթ) և Ֆելիքս Սիմոնյանի (թավջութակ):

Համերգի ծրագրում տեղ էին գտել Մոցարտի «Սոլ մաժյոր»-ը, է. Միքոյանի «Անտունի»-ն (վարիասիոն), Կոմիտաս վարդապետի «Ալ ալլուդ»-ը, «Երկինքն ամպել ա»-ն, «Էջմիածնի պար»-ը և «Գարուն ա»-ն:

Համերգը ջերմորեն ընդունվեց և ծափահարվեց բոլոր ներկաների կողմից:

Համերգից հետո, ներկաները հյուրասիրվեցին հայրենի աշխարհի քաղցրահամ խաղողով և դեղձով:

